ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N N << ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-17/11>>

ք. Երևան <<27>> փետրվար 2017թ.

ՀՀ քննչական կոմիտեն՝ ի դեմս դեպարտամենտի ղեկավար Աշոտ Զալինյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Արդարադատության ակադեմիան, ի դեմս Ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Առաքելյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով <<Արդարադատության ակադեմիայի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **վերապատրաստման, մասնագիտական պատրաստման և հատուկ ուսուցման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.5. Ծառայությունները մատուցվում են <<Արդարադատության ակադեմիայի մասին>> ՀՀ օրենքին, <<Արդարադատության ակադեմիայի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հաստատված ուսուցման ծրագրերին և այլ վերաբերելի իրավական ակտերին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն. չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

2.1.4 Պատվիրատուից ողջամիտ ժամկետում ստանալ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների (այսուհետ՝ Քննիչներ) քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների (այսուհետ՝ Ծառայողներ) քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ Թեկնածուներ) ցուցակները,

2.1.5 Պատվիրատուից սահմանված ժամկետում ստանալ գնահատման և բողոքարկման հանձնաժողովի անդամների ցուցակը,

2.1.6 Պատվիրատուից սահմանված ժամկետում ստանալ Թեկնածուների փորձաշրջանի կազմակերպման համար անհրաժեշտ քննչական ծառայության ստորաբաժանումների ցանկը, ինչպես նաև փորձաշրջանի ղեկավարների տվյալները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.2. ժամանակին տրամադրել Քննիչների Ծառայողների և Թեկնածուների (այսուհետ՝ Ունկնդիրներ) ցուցակները,

2.2.3. ժամանակին ներկայացնել գնահատման և բողոքարկման հանձնաժողովի անդամների ցուցակը,

2.2.4. ապահովել դասընթացներին ներկայանալու վերաբերյալ Քննիչների ու Ծառայողների ծանուցումը,

2.2.5. Թեկնածուների փորձաշրջանի կազմակերպման համար ապահովել համապատասխան քննչական ծառայության ստորաբաժանումների ցանկի, ինչպես նաև փորձաշրջանի ղեկավարների տվյալների ժամանակին ներկայացումը,

2.2.6. կատարել <<Արդարադատության ակադեմիայի մասին>> ՀՀ օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.6 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2. Պատվիրատուից ողջամիտ ժամկետում ստանալ Ունկնդիրների ցուցակները,

2.3.3. Պատվիրատուից սահմանված ժամկետում ստանալ գնահատման և բողոքարկման հանձնաժողովի անդամների ցուցակը,

2.3.4. Պատվիրատուից սահմանված ժամկետում ստանալ Թեկնածուների փորձաշրջանի կազմակերպման համար անհրաժեշտ քննչական ծառայության ստորաբաժանումների ցանկը, ինչպես նաև փորձաշրջանի ղեկավարների տվյալները:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 ժամանակին և պատշաճ կարգով կազմակերպել և անցկացնել Ունկնդիրների համապատասխանաբար՝ **վերապատրաստման, մասնագիտական պատրաստման և հատուկ ուսուցման ծառայությունները,**

2.4.5 կազմել ու, <<Արդարադատության ակադեմիայի մասին>> ՀՀ օրենքին համապատասխան, հաստատման ներկայացնել Ունկնդիրների ուսուցման գործընթացը կանոնակարգող անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերը,

2.4.5 կազմակերպել քննական հարցերի մշակումը և ապահովել դրանց գաղտնիության պահպանումը,

2.4.6 Պատվիրատուի պահանջով տրամադրել Ունկնդիրների ուսուցմանը վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ,

2.4.7 Պատվիրատուի պահանջով վերացնել հայտնաբերված թերությունները,

2.4.8 յուրաքանչյուր ուսուցման ծրագրի ավարտից հետո ներկայացնել ամփոփ տեղեկանք Ունկնդիրների ուսումնառության արդյունքների վերաբերյալ,

2.4.9 կատարել <<Արդարադատության ակադեմիայի մասին>> ՀՀ օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է **30263023 (երեսուն միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար քսաներեք)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրով մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է.

4.2 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր դասաժամի համար՝ անկախ տվյալ խմբում ունկնդիրների քանակից

4.3 Առավելագույնը 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ՝ հատուկ ուսուցման յուրաքանչյուր ակադեմիական ժամի համար՝ 1 ունկնդրի հաշվարկով,

4.4 133 /մեկ հարյուր երեսուներեք/ ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր Ունկնդրին 2 ակադեմիական ժամ ծավալով ուսուցման հաշվարկով՝ տվյալ Ունկնդրի գրենական պիտույքների, կենցաղային և գրասենյակային նյութերի, ինչպես նաև կոմունալ վճարումների համար՝ անկախ տվյալ դասաժամերին տվյալ Ունկնդրի ներկայությունից կամ բացակայությունից:

4.5 օրական 3000 /երեք հազար/ դրամ սննդի վճար մարզերից ժամանած 17 պետական ծառայողներից, և 155 քննիչներից յուրաքանչյուրին: Ընդ որում, յուրաքանչյուր պետական ծառայողին վճարվում է 4, քննիչներին՝ 4 /լրացուցիչ վերապատրաստման ժամանակ 6/ օրվա սննդի վճար:

4.6 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ ճանապարհածախս մարզից ժամանած 17 պետական ծառայողներից, և 155 քննիչներից յուրաքանչյուրին: Հաշվարկը՝ հավելված 2.1:

4.7 Ուղևորափոխադրման համար առավելագույնը 60000 ՀՀ դրամ 1 խմբի հաշվարկով:

Սննդի վճարի և ճանապարհածախսի վճարումը կատարվում է Հավելված 4-ում նկարագրված դիմումի հիման վրա:

4.8 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.6 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2017 թվականի փետրվարի 20-ից ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, N 2, 2.1, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011002145 ՀՎՀՀ 02631263	<<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9 «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ Հ/Հ 16043032235600 ՀՎՎՀ 00129631
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
<<27>> փետրվար 2017թ. Կնքված
N << ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-17/11>> ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր	
Պետական ծառայողներ	ՈՒսուցման ծրագիր Հավելված 1.1
Քննիչներ	ՈՒսուցման ծրագիր Հավելված 1.2
Քննիչների լրացուցիչ վերապատրաստում	ՈՒսուցման ծրագիր Հավելված 1.3
Թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցում	ՈՒսուցման ծրագիր Հավելված 1.4
Քննիչների հատուկ ուսուցում	ՈՒսուցման ծրագիր Հավելված 1.5
Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	20.12.2017թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011002145
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Արդարադատության ակադեմիա>>
ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՎՀ 00129631

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 1.1
<<14>> փետրվար 2017թ. կնքված
N << ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-17/11>> ծածկագրով գնման պայմանագրի

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) դեպարտամենտի պետական ծառայողների (այսուհետ՝ Ծառայող) 2017թ. վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը, ժամկետները և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 27-ի թիվ 29-Լ հրամանի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ծառայողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը՝ հետևյալ ոլորտներում. քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայություն, գործավարություն և փաստաթղթաշրջանառություն, ժամանակի կառավարում:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:

5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 32 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ շաբաթ ժամկետով (ներառյալ՝ 4 օր դասընթացները) և ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ:

6. Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ միասնական քննությամբ:

7. Ծառայողների վերապատրաստման ժամանակացույցը սահմանվում է 2017 թվականի մարտ-ապրիլ ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	IS-J-019-17	ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության հարցերը	12
2.	IS-G-019-17	Գործավարությունը և փաստաթղթաշրջանառությունը ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում	12
3.	IS-G-006-17	Ժամանակի կառավարում	8

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. IS-J-019-17. ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է Կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է Կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության նորմատիվ իրավական կարգավորումը, Կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողի վարքագծի կանոնները, կադրային քաղաքականության առանձնահատկությունները: Մասնավորապես, դասընթացի շրջանակներում ներկայացվելու և պարզաբանվելու են «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքների, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության վերաբերելի իրավադրույթները:

2. IS-G-019-17. Գործավարությունը և փաստաթղթաշրջանառությունը ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում

Դասընթացն անհրաժեշտ է Կոմիտեի դեպարտամենտում փաստաթղթաշրջանառության հիմնադրույթների և ընթացակարգերի վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է Կոմիտեի դեպարտամենտում գործավարության հիմնական գործառույթները և փաստաթղթաշրջանառության հիմունքները: Մասնավորեպես, դասընթացի շրջանակներում ներկայացվելու և պարզաբանվելու են «Գործավարության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1077-Ա որոշմամբ և ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի համապատասխան ներքին ակտերով սահմանված վերաբերելի ընթացակարգերը:

3. IS-G-006-17. Ժամանակի կառավարում

Դասընթացն անհրաժեշտ է ժամանակի արդյունավետ պլանավորման, կառավարման, ինչպես նաև անձնական և մասնագիտական կազմակերպվածության մակարդակի բարձրացման մասին գիտելիքների և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է ժամանակի և նրա նշանակության մասին հասկացությունը, ժամանակը՝ որպես անձի էներգետիկ պոտենցիալ, ժամանակի տեսակները, ժամանակի ընկալման տեսակները, գործունեության կառուցվածքը և դրա ժամանակային բնութագրիչները, մարդը և ժամանակը ճգնաժամային իրավիճակներում, մասնագետի ժամանակային իրազեկություն, ժամանակի հիմնական «թակարդները», ժամանակի կորստի և ժամանակային նախապատվությունների վերլուծություն, ժամանակաճշտում, ժամանակի կառավարման սկզբունքներն ու ռազմավարությունները, գլոբալ նպատակների որոշումը, երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը, կարճաժամկետ և օպերատիվ պլանները, նախապատվությունների որոշումը ABC վերլուծության միջոցով, էյզենհաուերի սկզբունքը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011002145 ՀՎՀՀ 02631263	<<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9 «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ Հ/Հ 16043032235600 ՀՎՎՀ 00129631
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1.2
<< 11 >> փետրվար 2017թ. կնքված
N << ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-17/11>> ծածկագրով գնման պայմանագրի

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քննիչների (այսուհետ՝ քննիչներ) 2017թ. վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ժամաքանակը և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է Կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 27-ի թիվ 29-Լ հրամանի հիման վրա:
3. Ծրագիրը նպատակաուղղված է քննիչների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը քրեական իրավունքի, քրեական դատավարության, քրեական գործերով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի, դատական փորձաքննությունների և այլ ոլորտներում:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով: Վերապատրաստման ժամաքանակը ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների[1] համար սահմանվում է 24 ակադեմիական ժամ, այլ քննիչների համար՝ 30 ակադեմիական ժամ: Ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների վերապատրաստումն իրականացվում է 3 աշխատանքային օրերի ընթացքում: Մյուս քննիչների վերապատրաստումն իրականացվում է 4 աշխատանքային օրերի ընթացքում:
5. Վերապատրաստումն առավելապես իրականացվում է դասավանդման ինտերակտիվ մեթոդներով:
6. Վերապատրաստման ժամանակացույց է սահմանվում 2017 թվականի ապրիլ-նոյեմբեր ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	I-Q-040-17	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը	8
2.	I-Q-041-17	ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը	8
3.	I-Q-042-17	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով	8
4.	I-Q-047-17	Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում	8
5.	I-Q-048-17	Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը	8
6.	I-Q-049-17	Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը	8
7.	I-Q-050-17	Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները	8
8.	I-Q-051-17	Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը	8

2. ՀՀ քննչական կոմիտեի այլ քննիչների վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
9.	I-J-008-17	Քննիչի մասնագիտական էթիկա	4
10.	I-J-025-17	Դատական փորձաքննության արդի հարցերը	4

[1] ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի, ճինվորական քննչական գլխավոր վարչության, Երևան քաղաքի քննչական վարչության, մարզային քննչական վարչությունների ստորաբաժանումների վարչությունների և բաժինների պետեր:

11.	I-Q-040-17	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը	6
12.	I-Q-041-17	ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը	6
13.	I-Q-042-17	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով	6
14.	I-Q-047-17	Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում	6
15.	I-Q-048-17	Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը	6
16.	I-Q-049-17	Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը	6
17.	I-Q-050-17	Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները	6
18.	I-Q-051-17	Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը	6

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. I-Q-040-17. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և ընթացիկ բարեփոխումների, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- քրեական նոր օրենսգրքի նախագծի հիմնադրույթները,
- քրեաիրավական ինստիտուտների, այդ թվում՝ պատժողական քաղաքականության զարգացման միտումները և հեռանկարները,
- հանցավոր արարքների ճշգրիտ որակման հիմնահարցերը (մասնավորապես՝ մարդու կյանքի և առողջության, սեռական ազատության և անձեռնմխելիության, այդ թվում՝ անչափահասների դեմ ուղղված հանցագործությունների, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, սեփականաթության դեմ ուղղված և կոռուպցիոն հանցագործությունների և այլն) և դրանց լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառ փորձը,
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները և դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության ու Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի դրույթները):

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

2. I-Q-041-17. ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումները, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները մատուցելու, դրանք գործնականում կիրառելու, ինչպես նաև քննչական գործողությունների կատարման կարգի պահպանման կարողությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝

- ՀՀ քրեական դատավարության ոլորտում նոր օրենսդրությունը,
- ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթին վերաբերող առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը,
- ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի կիրառման առանձնահատկությունները,
- քննչական գործողությունների կատարման ընթացքում ծագող գործնական հիմնահարցերը և նախաքննության ընթացքում քննիչների կողմից թույլ տրվող խախտումները,
- առանձին քննչական գործողությունների կատարման դատավարական և կրիմինալիստիկական առանձնահատկությունները,

• նախաքննության ընթացքում կայացվող որոշումների և քննչական գործողությունների արձանագրությունների կազմման առանձնահատկությունները,

• դատավարական հարկադրանքի միջոցները և դրանց ուսումնասիրությունը, ապացույցների և ապացուցման գործընթացի խնդիրները, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացուցման գործընթացում օգտագործելու իրավական կարգավորման խնդիրները,

• պետական, նոտարական և բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու դատավարական կարգը և այլն:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

3. I-Q-042-17. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

• քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով և միջազգային այլ պայմանագրերով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրների, անձի ազատության և անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքի, խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, ռասիզմի և խտրականության արգելքի) պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

4. I-Q-047-17. Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում

Դասընթացն անհրաժեշտ է ապացույցների թույլատրելիության վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի և ներպետական դատական պրակտիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ապացույցների հասկացության և թույլատրելիության բովանդակության, այդ թվում՝ ապացույցների թույլատրելության, ներպետական և եվրոպական չափանիշների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի և ՄԻԵԴ դիրքորոշումները,
- օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների օգագործման մի շարք հարցերի վերաբերյալ ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումները,
- «Հանցագործության սադրանքի» հասկացության և բովանդակության վերաբերյալ՝ ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

5. I-Q-048-17. Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը

Դասընթացն անհրաժեշտ է կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննության վերաբերյալ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին և ներպետական դատական պրակտիկային ծանոթացնելու և համապատասխան չափորոշիչների կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- կյանքի իրավունքի, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի, ինչպես նաև դրանք պահպանելու ուղղությամբ պետության պոզիտիվ պարտավորության բովանդակության բացահայտումը,
- նշված բնույթի գործերով քննության առանձնահատկությունները՝ ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված չափանիշների լույսի ներքո:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

6. I-Q-049-17. Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը

Դասընթացն անհրաժեշտ է խոցելի տուժողների, վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննության առանձնահատկությունների և այդ հարցերի կապակցությամբ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- խոցելի խմբերի վերհանման չափանիշները,
- խոցելի անձանց մասնակցությամբ իրականացվող քննության առանձնահատկությունները,
- խոցելի անձանց նկատմամբ պաշտպանության միջոցների կիրառման առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

7. I-Q-050-17. Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները

Դասընթացն անհրաժեշտ է մինչդատական վարույթում կասկածյալի և մեղադրյալի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման կապակցությամբ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ՄԻԵԿ 5-րդ հոդվածով երաշխավորված անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի բովանդակությունը,
- անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման հիմքերը,
- անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման դեպքում կասկածյալի, մեղադրյալի կամ դատավարության այլ մասնակցի իրավունքների ապահովման եղանակները:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

8. I-Q-051-17. Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը

Դասընթացն անհրաժեշտ է քրեական գործերի քննության մեթոդաբանության առանձին հարցերի կապակցությամբ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ՄԻԵԿ հիմնարար սկզբունքները, որոնք ազդում են քրեական գործով քննության մեթոդաբանության վրա,
- քննության վարույթի մասնակիցների մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի բովանդակությունը,
- քննության ընթացքում կասկածյալի և մեղադրյալի արդար դատաքննության, անձնական ազատության իրավունքների ապահովման եղանակները և այլն:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար:

9. I-J-008-17. Քննիչի մասնագիտական էթիկա

Դասընթացը պայմանավորված է քննիչի մասնագիտական էթիկայի կանոնների հետ կապված գիտելիքները և դրանք կենսագործելու կարողությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քննչական գործունեության ընթացքում և դրանից դուրս հարաբերություններում քննիչի վարքագծի կանոնների, քննիչների էթիկայի հարցերով վարույթի հետ կապված առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնողների:

10. I-J-025-17. Դատական փորձաքննության արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է փորձաքննությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք և արդյունավետ փարձաքննությունների նշանակման կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քրեական վարույթներում փորձաքննությունների (դատաբժշկական, դատահոգեբանական, նյութագիտական, դատաձեռագրաբանական, դատաձգաբանական և այլ) նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, փորձաքննությունների կատարման և արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը (օրինակ՝ փորձաքննությունները դատական հոգեբանության, դատական հոգեբուժության ոլորտներում, մասնավորապես՝ աֆեկտ, հոգեկան խիստ հուզմունք, անմեղսունակություն, սահմանափակ մեղսունակություն):

Դասընթացը նախատեսված է բոլոր քննիչների համար, բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնողների:

11. I-Q-040-17. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 1-ին կետի ներքո:

12. I-Q-041-17. ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 2-րդ կետի ներքո:

13. I-Q-042-17. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով

Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 3-րդ կետի ներքո:

14. **I-Q-047-17. Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում**
Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 4-րդ կետի ներքո:
15. **I-Q-048-17. Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը**
Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 5-րդ կետի ներքո:
16. **I-Q-049-17. Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը**
Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 6-րդ կետի ներքո:
17. **I-Q-050-17. Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները**
Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 7-րդ կետի ներքո:
18. **I-Q-051-17. Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը**
Առարկայական կուրսի համառոտ նկարագիրը տե՛ս 8-րդ կետի ներքո:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011002145 ՀՎՀՀ 02631263	<<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9 «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ Հ/Հ 16043032235600 ՀՎՎՀ 00129631
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1.3
<<27>> փետրվար 2017թ. կնքված
N << ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-17/11>> ծածկագրով գնման պայմանագրի

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քննիչների (այսուհետ՝ քննիչների) 2017թ. լրացուցիչ վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ժամաքանակը և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

8. Ծրագիրը մշակվել է Կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 27-ի թիվ 29-Լ հրամանի հիման վրա:

9. Ծրագիրը նպատակաուղղված է քննիչների՝ առանձին ոլորտներում անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների կատարելագործմանը և որակավորման բարձրացմանը:

10. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով: Լրացուցիչ վերապատրաստման ժամաքանակը 50 ակադեմիական ժամ է և իրականացվում է աշխատանքային 6 օրերի ընթացքում:

11. Վերապատրաստումն առավելապես իրականացվում է դասավանդման ինտերակտիվ մեթոդներով:

12. Վերապատրաստումն իրականացվում է 2017 թվականի ապրիլ-մայիս ամիսներին:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

2. ՀՀ քննչական կոմիտեի քննիչների լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	ժ/ք
1.	Q-040-17	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը	10
2.	Q-041-17	ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը	10
3.	Q-042-17	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով	20
4.	Q-017-17	Կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցերը	20

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

19. Q-040-17. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և ընթացողող բարեփոխումների, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- քրեական նոր օրենսգրքի նախագծի հիմնադրույթները,
- քրեաիրավական ինստիտուտների, այդ թվում՝ պատժողական քաղաքականության զարգացման միտումները և հեռանկարները,
- հանցավոր արարքների ճշգրիտ որակման հիմնահարցերը (մասնավորապես՝ մարդու կյանքի և առողջության, սեռական ազատության և անձեռնմխելիության, այդ թվում անչափահասների դեմ ուղղված հանցագործությունների, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, սեփականաթության դեմ ուղղված և կոռուպցիոն հանցագործությունների և այլն) և դրանց լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառ փորձը,
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև

«Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները, ինչպես նաև դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը):

20. Q-041-17. ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը

Դասընթացը անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումները, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները մատուցելու, դրանք գործնականում կիրառելու, ինչպես նաև քննչական գործողությունների կատարման կարգի պահպանման կարողությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝

- ՀՀ քրեական դատավարության ոլորտում նոր օրենսդրությունը,
- ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթին վերաբերող առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը,
- ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի կիրառման առանձնահատկությունները,
- քննչական գործողությունների կատարման ընթացքում ծագող գործնական հիմնահարցերը և նախաքննության ընթացքում քննիչների կողմից թույլ տրվող խախտումները,
- առանձին քննչական գործողությունների կատարման դատավարական և կրիմինալիստիկական առանձնահատկությունները,
- նախաքննության ընթացքում կայացվող որոշումների և քննչական գործողությունների արձանագրությունների կազմման առանձնահատկությունները,
- դատավարական հարկադրանքի միջոցները և դրանց ուսումնասիրությունը ապացույցների և ապացուցման գործընթացի խնդիրները, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացուցման գործընթացում օգտագործելու իրավական կարգավորման խնդիրները,
- պետական, նոտարական և բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու դատավարական կարգը և այլն:

21. Q-042-17. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքները և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝ քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանության, Կյանքի իրավունքին և խոշտանգումների ու վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող հարցերի, մինչդատական կալանքի, ինչպես նաև խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննության կապակցությամբ, այդ թվում՝

- անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը, մասնավորապես Հայաստանի Հանրապետության դեմ վերջին ժամանակաշրջանում կայացված որոշումների լույսի ներքո,
- մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, մասնավորապես՝, առանձին քննչական գործողություններ կատարելիս՝ դեպքի վայրում զննություն, բնակարանում խուզարկություն կատարելիս, անձնական խուզարկություն և այլ գործողություններ կատարելիս ՄԻԵԿ-ի 3-րդ և 8-րդ հոդվածների պահանջների պահպանման լույսի ներքո:
- արդար դատաքննության իրավունքի պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքը, այդ թվում՝ հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման հարցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության դեմ վերջին ժամանակաշրջանում կայացված որոշումների լույսի ներքո: